

Հավելված  
«ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի  
Տարբ-ի «06» N344 հրամանի

Կազմված է 10 փետրվարի 2020 թ.-ին  
Բաղկացած է 9 (ինը) էջից

Տպագրված է ընդամենը 4 (չորս) օրինակ  
ՕՐԻՆԱԿ 3

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

«ՀՀ Էկոնոմիկայի նախարարի  
2020 թ. Տարբ «6»-ի  
N 344-Ն հրամանով

**Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է**  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ  
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
25.03.2020 ԿՈՂՄԻՑ

Գրանցման համար՝ 222.120.1122435  
ՀՎՀՀ՝ 00219641

«ՀՀ Էկոնոմիկայի նախարար

S. Խաչատրյան  
S. Խաչատրյան



**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. «Ստանդարտացման և չափազիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի «Ստանդարտների ազգային ինստիտուտ» և «Չափազիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու և «Ստանդարտացման և չափազիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» թիվ 1472-Ա որոշման համաձայն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 13.10.2003թ., գրանցման համար՝ 222.120.00210, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 00081133, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող., հ. 49/4) և «Չափազիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնի կողմից 18.04.1996թ., գրանցման համար՝ 269.140.01169, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 02210395, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. հ. 49/4) միաձուլման միջոցով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է դրանց իրավահաջորդը՝ փոխանցման ակտերին համապատասխան:

2. «ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությունը (նախկին անվանումը «ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերություն) ստեղծվել է ՀՀ Կառավարության 25.09.2003թ. N 1180-Ա որոշման համաձայն, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 08.10.2003թ. N 132 հրամանով՝ «ԵՐԵՎԱՆ-ԹԵՍԹ» փակ բաժնետիրական ընկերության և «ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերության միաձուլման ձևով վերակազմակերպման ճանապարհով և հանդիսանում է դրանց իրավահաջորդը փոխանցման ակտին համապատասխան:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 21-ի թիվ 936-Ն որոշման համաձայն՝ «ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպվել է՝ «ՎԱՆԱԶՈՐ-ԹԵՍԹ» (գրանցված է ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 30.05.1995թ., վերակազմավորման գրանցման օրը՝ 20.07.1998թ., գրանցման թիվ՝ 26.140.00375, վկայական՝ 01 Ա 012965, գտնվելու վայրը՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր,

Երանյան խճ., թիվ 94), «ԿԱՊԱՆ-ԹԵՍԹ» (գրանցված է ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 03.10.1995թ., վերակազմավորման գրանցման օրը՝ 07.08.1998թ., գրանցման թիվ՝ 27.140.00375, վկայական՝ 01 Ա 017802, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Կապան, Մ.Ստեփանյան փող., թիվ 41), «ԳՅՈՒՄԴԻ-ԹԵՍԹ» (գրանցված է ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 28.12.1994թ., վերակազմավորման գրանցման օրը՝ 14.10.1998թ., գրանցման թիվ՝ 29.140.00112, վկայական՝ 01 Ա 005348, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Գյումրի, Շիրակացի փող., թիվ 68), «ՕԿՏԱՆ-ԹԵՍԹ» (գրանցված է ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 20.04.1998թ., վերակազմավորման գրանցման օրը՝ 26.08.1998թ., գրանցման թիվ՝ 264.120.04237, վկայական՝ 01 Ա 040977, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Վատուտինի փող., թիվ 30ա) փակ բաժնետիրական ընկերությունները նրան միացման ճանապարհով և հանդիսանում է նրանց իրավահաջորդը՝ փոխանցման ակտերին համապատասխան:

3. «ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությունը (նախկին անվանումները՝ «ՌԵՍՅՈՒՄՊՐԻԲՈՐ» փակ բաժնետիրական ընկերություն և «ՉԱՓԱԳԵՏ» փակ բաժնետիրական ընկերություն, անվանափոխված ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման պետի 22.03.2000թ. N 08-Կ հրամանով և ՀՀ կառավարության 22.07.2004թ. N 1032-Ն որոշմամբ) ստեղծվել է ՀՀ Կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչության պետի 16.08.1999թ. N 42-Կ հրամանով «ՌԵՍՅՈՒՄՊՐԻԲՈՐ» պետական ձեռնարկության (վկայական՝ 01Ա 024124, գրանցման համար՝ 269.140.01169, գրանցված՝ 18.04.1996թ.) վերակազմավորման ճանապարհով և հանդիսանում է դրա իրավունքների ու պարտականությունների իրավահաջորդը:

4. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության գործունեության նպատակն է «Չափումների միասնականության ապահովման մասին» ու «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ իր իրավասությունների սահմաններում գործառույթների իրականացումը:

5. Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

6. Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած գործունեություն:

7. Ընկերության կողմից այնպիսի գործունեության իրականացնելու իրավունքը, որով զբաղվելու համար անհրաժեշտ է հատուկ թույլտվություն (լիցենզիա), ծագում է նման թույլտվությունը ստանալու պահից, կամ դրանում նշված ժամկետում և դադարում է դրա գործողության ժամկետի ավարտով: Իր առջև դրված նպատակներն իրականացնելու համար ընկերությունը զբաղվում է գործունեության հետևյալ հիմնական տեսակներով.

1) ընդունում և գործողության մեջ է դնում, դադարեցնում է ազգային, միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտները,

2) ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով սահմանում է ստանդարտացման աշխատանքների կատարման կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական կանոնները, ընթացակարգերը, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտների և այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման կարգը,

3) կազմակերպում է ազգային, միջազգային, տարածաշրջանային, միջպետական, ստանդարտների նախագծերի փորձաքննություն,

4) վարում է հաստատված չափման միջոցների և ստանդարտ նմուշների գրանցամատյան,

5) ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը ստանդարտացման և չափագիտական միջազգային, տարածաշրջանային և միջպետական կազմակերպություններում, գործում է՝ ելնելով Հայաստանի Հանրապետության ստանդարտացման, չափագիտության ազգային շահերից,

6) մասնակցում է միջազգային, տարածաշրջանային և միջպետական ստանդարտացման և չափումների միասնականության ապահովմանն ուղղված աշխատանքներին,

7) իր իրավասության շրջանակներում ապահովում է ստանդարտացման, չափագիտության միջազգային և տարածաշրջանային այն կազմակերպությունների կանոնների և պարտավորությունների կատարումը, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը:

8) ստեղծում է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներ և համակարգում դրանց գործունեությունը,

9) ստեղծում և վարում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը,

10) կանոնակարգող մարմնի հանձնարարությամբ նախապատրաստում և հրապարակում է տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանումն ապահովող ստանդարտների ցանկը.

11) իրականացնում է ազգային, միջազգային, միջպետական և տարածաշրջանային ստանդարտների վաճառք,

12) կազմակերպում է ստանդարտացման, չափազիտության և համապատասխանության գնահատման բնագավառներում կադրերի մասնագիտացում և վերապատրաստում, համապատասխանության գնահատման բնագավառում մասնագետների համապատասխան ուսուցում և որպես փորձագետներ որակավորում, դրանց արդյունքների հիման վրա նշված բնագավառներում շնորհում է համապատասխան վկայագրեր:

13) կազմակերպում ու անցկացնում է դասընթացներ, սեմինարներ և գիտաժողովներ:

14) իրականացնում է ազգային միջազգային, տարածաշրջանային ստանդարտների, ստանդարտացման բնագավառի կանոնների, նորմերի և ուղեցույցների, կազմակերպության ստանդարտների (տեխնիկական պայմանների), լինչպես նաև դրանց փոփոխությունների փորձաքննությունը և հաշվառումը,

15) իրականացնում է ազգային ստանդարտների (Հայաստանի Հանրապետությունում կիրառվող միջազգային, միջպետական և տարածաշրջանային) տեղեկատվական համակարգերում ընդհանուր օգտագործման էլեկտրոնաթվային ձևով վարման աշխատանքները,

16) իրականացնում է արտադրանքի, ծառայությունների, կառավարման համակարգերի, անձերի համապատասխանության պարտադիր և կամավոր հավաստման աշխատանքներ,

17) կատարում է արտադրանքի լաբորատոր փորձարկումներ,

18) իրականացնում է ստանդարտացման, չափազիտության և համապատասխանության գնահատման բնագավառներում խորհրդատվական աշխատանքներ, մատուցում է տեղեկատվական ծառայություններ,

19) իրականացնում է ստանդարտացման, համապատասխանության գնահատման և չափազիտության բնագավառներում տեղեկատվական գրքույկների, տեղեկագրերի, ձեռնարկների, կատալոգների, մասնագիտական այլ գրքերի և տեղեկագրքերի նախապատրաստումը և հրատարակումը,

20) իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իրականացնում է ստանդարտացման և չափագիտության բնագավառներում պետական քաղաքականությունը,

21) ստեղծում, կատարելագործում, պահպանում և կիրառում է մեծությունների միավորների էտալոնները, ստեղծում է մեծությունների միավորների չափերի փոխանցման համակարգը,

22) իրականացնում է չափագիտության բնագավառում գիտական հետազոտություններ,

23) իրականացնում է ազգային չափանմուշների (էտալոնների) պահպանումը,

24) ապահովում է ազգային չափանմուշների (էտալոնների) միջպետական և միջազգային չափանմուշների հետ բաղդատումը, ապահովում է ազգային չափանմուշների հետևելիությունը,

25) իրականացնում է չափման միջոցների և ստանդարտ նմուշների համապատասխանության փորձարկումներ՝ տեսակի հաստատման նպատակով,

26) տալիս է չափման միջոցների ստանդարտ նմուշների տեսակի հաստատման և (կամ) մերժման մասին եզրակացություն,

27) իրականացնում է չափման միջոցների ստուգաչափում, տրամաչափարկում, եզակի օրինակով արտադրվող և ներմուծվող չափման միջոցների չափագիտական վկայագրում, չափագիտական փորձաքննություն, ստանդարտ նմուշների վկայագրում,

28) Կատարում է փորձարկման սարքավորումների և ստենդների վկայագրում չափումների միասնականության ապահովման համակարգում,

29). Ստանդարտ նմուշների, չափման միջոցների ստեղծում, նորոգում, արտադրություն և վաճառք:

30) կատարում է չափումների կատարման, ստուգաչափման և տրամաչափարկման մեթոդիկաների մշակում, հաստատում և վկայագրում:

8. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Ստանդարտացման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

9. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերություն,

կրճատ՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ,

ռուսերեն լրիվ՝ Закрытое Акционерное Общество «Национальный орган по стандартизации и метрологии»,

կրճատ՝ ЗАО «Национальный орган по стандартизации и метрологии»,

անգլերեն լրիվ՝ «National Body for Standards and Metrology» Closed Joint Stock Company,

կրճատ՝ «National Body for Standards and Metrology» CJSC:

10. Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պողոտա, 49/4 շենք:

## II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

11. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 357 771 000 (երեք հարյուր հիսունյոթ միլիոն յոթ հարյուր յոթանասուներեկ հազար) դրամ, որը կազմում է 119 257 ( մեկ հարյուր տասնինը հազար երկու հարյուր հիսունյոթ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 3000 (երեք հազար) դրամ:

Բոլոր 119 257 բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

12. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

## III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

13. Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

14. Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը մեկամսյա ժամկետում առաջնահերթ կարգով իրավունք ունի ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերն օրենքով սահմանված կարգով:

15. Ընկերության բաժնետերն իրավունք ունի իր բաժնետոմսերը օտարել ընկերության մեկ կամ մի քանի բաժնետերերի, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս բաժնետերերն ունեն այդ բաժնետոմսերը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝ ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնետոմսերին համամասնորեն: Եթե ընկերության մյուս բաժնետերերը չեն օգտագործել բաժնետոմսերը գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այն օգտագործել են մասամբ, ապա ընկերությունն ունի այդ բաժնետոմսերը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:

16. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում բաժնետիրոջ պահանջով ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել բաժնետիրոջ բաժնետոմսերը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ բաժնետերերի կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել ընկերությանը պատկանող բաժնետոմսերի մարման ճանապարհով ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

17. Նախապատվության իրավունքի (այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

#### IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

18. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում:

19. Ընկերությունը պարտավոր է տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարման մասին իր բաժնետերերին օրենքով սահմանված կարգով ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն 5 օր առաջ:

20. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունները և որոշումներ ընդունելու կարգը սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

21. Ընկերությունում տնօրենների խորհուրդ չի ձևավորվում:

22. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության տնօրենը, որը գործում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում, ինչպես նաև իրականացնում է նույն օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի «բ-դ» ենթակետերով սահմանված իրավասությունները:

23. Ընկերության 100 տոկոս բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող բոլոր 100 տոկոս բաժնետոմսերի կառավարման լիազորությունները և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված լիազորությունները վերապահված են Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը: